

**Արձանագրություն № 4 (319)**  
**ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2019 թ-ի նոյեմբերի 19-ի նիստի**

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 23-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Գիտխորհրդի նիստին ներկա է ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գ. Գևորգյանը:

Հաշվի առնելով, որ համաձայն ֆակուլտետի կանոնադրության դեկանը չի կարող լինել դեկանի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերի նախագահողը, և որ այդ նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը՝ դեկան, դոցենտ Պ.Բալայանը առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածուներ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեց դոցենտ. Դ. Գոզարովայի թեկնածությունը: Բաց քվեարկությամբ նախագահող ընտրվեց Դ.Յ. Գազարովան:

Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

- 1. Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվություն:**
- 2. Ռուս բանասիրության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի մասին:**

**ԼՄԵՑԻՆ . Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:**

Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ.Բ. Բալայանը ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարվա հաշվետվությունը:

Ներկա պահին ֆակուլտետում սովորում է 157 ուսանող. 118 բակալավրի ծրագրով, 18 ուսանող մագիստրատուրայում, 17 ուսանող հեռակա բաժնում: Ունենք նաև 4 ուսանող մագիստրատուրայում Չինաստանից: Առաջին կուրս է ընդունվել 36 ուսանող անցած տարվա 20-ի փոխարեն: Սա այս մասնագիտությամբ դիմորդների 50 տոկոսն է: Հույս ունենք, որ հաջորդ տարի իրավիճակը կփոխվի: Ակնկալում ենք 30 / 20 ուսանող: Ռեկտորի շնորհիվ հաջողվեց լուծել միասնական քննությունների հարցը – հանվեց բանավոր քննությունը ՄՄՀ մասնագիտության համար:

Խնդիրներից մեկն այն է, որ տարեց տարի կրճատվում է բարձրագույն կրթություն ստանալ ցարնացողների թվաքանակը:

Մյուս խնդիրը միասնական քննության ծրագիրն է, որի հետ կապված դիմել ենք նախարարություն, բայց դեռ անպատասխան:

Եվս մեկ խնդիր կարող է լինել ուսման վարձի բարձրացումը:

Ֆակուլտետում դասավանդում են 59 դասախոս – 41.5 դրույք:

Ֆակուլտետի դասախոսները այցելում են շրջանների և մայրաքաղաքի դպրոցները, հանդիպում ուսուցիչների և աշակերտների հետ: Սակայն կարծում ենք, որ այս աշխատանքի ձևաչափը վերանայման կարիք ունի:

Աշխատանքը կազմակերպվում է ուսումնական պլանին համապատասխան: Հիմնովին վերանայվել են մագիստրոսական և բակալավրիատի ծրագրերը: Մտահոգիչ է ընդունելությունը մագիստրատուրա: Ընդունել ենք 9 ուսանող 2 ծրագրով: Խնդիրները, մեր կարծիքով, կայանում են գումարի, մոտիվացման պակասի մեջ, որում չենք բացառում մեր բացթողումները: Առաջարկում ենք հարակից մասնագիտությունների համար հանել ընդունելության քննությունը:

Նախընտրելի է կազմակերպել մեկամյա ուսուցում մագիստրատուրայում, որի հաջողված փորձ ունեք Չինաստանի ուսանողների հետ, ավելացնելով հետազոտական բաղադրիչը: Մագիստրոսական աշխատանքը պատկերացնում ենք նախագծի տեսքով, որը կատարում են 2-3 ուսանող: Դա կարող է լինել բառարանային կամ թարգմանչական աշխատանք: Կարծում ենք, որ հումանիտար մասնագիտությունների համար կարելի է ներդնել 5-ամյա սպեցիալիտետ:

Առաջարկում ենք բացել նոր մասնագիտություն – ռուսաց լեզու և լեհերեն, բուլղարեհեն, հունարեն: Ունենք օգնության պատրաստակամություն այդ երկրների դեսպանատների հետ: Ուսումնական պլանները կներկայացնենք 2021 թ:

Ֆակուլտետը ունի հարուստ գիտական ներուժ - անցած տարվա ընթացքում հրատարակվել է 1 մենագրություն, 1 ձեռնարկ, 50 հոդված, 2 թեզիս: Դասախոսները և ասպիրանտները մասնակցել են միջազգային կոնֆերանսներին: Հոկտեմբերին ֆակուլտետում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որն անցավ բարձր գիտական մակարդակի վրա:

Դ.Գազարովան և Լ.Մաթևոսյանը մասնակցել են **Էռազմու** ծրագրին: Ունեցել ենք 3 մագիստրոս Իտալիայից, 1 դասախոս Բոլոնիայի և 1 դասախոս Նյուրնբերգի համալսարանից: 1 դասախոս գործուղման է եղել Իտալիայում:

Մեկ անգամ ևս ուզում ենք նշել, որ մեր դասախոսները ակտիվորեն մասնակցում են Որակի բարձրացման դասընթացներին, սակայն անգլերենից պահանջվող Բ2 մակարդակը մեր դասախոսների համար համարում ենք մի քիչ անիմաստ, քանի որ միջազգային տիրույթում մեր աշխատանքային լեզուն ռուսերենն է, որից դասախոսների մեծ մասը ունի Ց1 սերտիֆիկատ:

Կատարվել են միջոցառումներ ուսանողների մասնակցությամբ – Պուշկինին նվիրված ցերեկույթ, որը ներկայացվեց գիտաժողովի բացմանը:

Համեմատելով ֆակուլտետի զարգացման ծրագրի դրույթների հետ, փաստում ենք, որ կատարվել են ծրագրի բազմաթիվ դրույթներ, բացառությամբ մնացորդային գիտելիքների ստուգումը և միջազգային գիտաժողովի անցկացումը:

Անշուշտ ունենք խնդիրներ, կապված միասնական քննությունների հետ:

Խնդիրներ ունենք մագիստրատուրա ընդունելության հետ - ընդամենը 10 տոկոսն է գնում:

Դեկանի եկույթից հետո արտահայտվեցին ամբիոնի վարիչներ Բ. Խոջումյանը, Ս.Լալայանը, Լ.Հակոբյանը, Լ.Բրուտյանը: Ելույթներում հնչեց դեկանի աշխատանքի

դրական գնահատականը, խորհուրդ տրվեց աշխատել միջառարկայական կուրսերի վրա և զարգացնել աշխատանքը Չինաստանի ուսանողների հետ:

Առաջարկվեց դեկանի աշխատանքը գնահատել բավարար: Բաց քվեարկությամբ 2018-2019 ուս. տարվա դեկանի աշխատանքը միաձայն գնահատվեց բավարար:

Ելույթ ունեցավ նաև ԵՊՀ-ի Գ.Գ.Գևորգյանը: Նա պատասխանեց ելույթներում հնչեցրած հարցերին: Հորդորեց մտածել, ինչպես հերաքրքրել դիմորդներին, մտածել նոր մասնագիտացումների մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական:

**2.ԼՍԵՑԻՆ՝** Ռուս բանասիրության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Պ.Բալայանը: Ներկայացրեց ռուս բանասիրության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նոր կազմը.

Ռ.Գրձեյան - նախագահ

Մ.Մկրտչյան

Մ.Այվազյան

Ա. Երվանդյան:

Նախագահող՝

Դ. Յ. ԳԱԶԱՐՈՎԱ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ